



# ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՎԸ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՐԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԹԵՍԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHÉGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: [info@westernprelacy.org](mailto:info@westernprelacy.org) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



## ՍԱՐԿԱՒԱԳԱԿԱՆ ԶԵՇՆԱՐԴՈՒԹԻՒՆ ԿԼԵՆՏԵՅՅԼԻ Ս. ԱՍՏՈՒՅՑԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԵԶ

Ս. Աստուածածին Եկեղեցւոյ հոգեւոր հովիւներուն եւ հոգաբարձութեան խնդրանքին ընդառաջելով, Կիրակի, 26 Դեկտեմբերին, Ս. Աստուածածին Եկեղեցւոյ մեջ պատարագեց եւ սարկաւագական ձեռնադրութիւն կատարեց Թեմիս Բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Ս. Արտիրոսեան:

Զրիստոնեայ Եկեղեցւոյ առաջին մարտիրոս Ս. Ստեփանոս Նախասարկաւագի տօնի շաբաթավերջին, սարկաւագական կարգ ստացան Եկեղեցւոյ նուիրեալ Վեց ուրարակիրներէն՝ Յրանդ Կեօքկեօզեան, Սեղրակ Քարատոլեան, Շաֆֆի Նալճեան, Շաֆֆի Զիւրքնեան, Արթուր Մաճառեան եւ Միհրան Վարդանեան:

«Յրաշափառ» շարականի Երգեցողութեամբ, Առաջնորդ Սրբազան Յօր գլխաւորած թափօրը Եկեղեցի մուտք գործեց եւ քարոզեն անմիջապէս առաջ, տեղի ունեցաւ սարկաւագական ձեռնադրութիւնը:

Ձեռնադրութեան ընթացքին իսրտաւիլակ քահանայ հայրերը ձեռնադրեալները ներկայացուցին Առաջնորդ Սրբազան Յօր: Սրբազան Յայրը քահանայ հայրերուն վկայութիւնը ուզեց նուիրեալներու բարեկենցաղ ընթացքին մասին եւ թէ՝ արժանի՝ են սարկաւագական աստիճանի կարգ ստանալու: Անոնց դրական վկայութիւնը ստանալէ ետք նուիրեալներու մասին, Սրբազան Յայրը անոնց շնորհեց սարկաւագական կարգ, եւ անոնց վրայ իր ձեռքերը դնելով աղաչեց Սուրբ Յոգիէն, որ անոնց վրայ հանգչի, մաքրէ զանոնք ամեն տեսակ աշխարհիկ մտահոգութիւններէ եւ արժանի դարձնէ սարկաւագական կոչում ստանալու:

Յուզիչ էր պահը, երբ ձեռնադրեալները դեպի արեւմուտք դառնալով, իրենց ափերը հրաժարիմքի ձեւով լայն բաևալով՝ հրաժարեցան աշխարհիկ զբաղմունքներէ եւ կոչուեցան ի դպրութենէ ի սարկաւագութիւն: Անոնք ապա իրաւունք ստացան պատարագիչ Եկեղեցականը զգեստաւորելու, Ս. Սկիհը Վերաբերելու, խորհրդատետրէն կարդալու, Աւետարան ընթերցելու եւ բուրվառ կատարելու:

Ապա Առաջնորդ Սրբազան Յայրը իր հոգեշունչ պատգամը տուաւ եւ յորդորական խօսքեր ուղղեց նորընծաներուն: Ան վեր առաւ նահատակ Ս. Ստեփանոս Նախավկայ սարկաւագի առաջինութիւնները, որպէս համայն սարկաւագներու տիպար օրինակ, ու թելադրեց նորոգ ձեռնադրեալներուն

հետեւիլ իրենց ուսուցին, մանաւանդ խրախուսեց ջթովնալ, չտկարանալ ու յարատելի իրենց սրբանուեր կեանքին մեջ:

## **PRELATE ORDAINS DEACONS AT ST. MARY'S CHURCH IN GLENDALE**

Saturday, December 25<sup>th</sup>, 2010, was the feast of St. Stephen the first deacon and Proto-martyr.

On Sunday, December 26<sup>th</sup>, the feast of St. Stephen, which is also a celebration of deacons, was commemorated in all Prelacy churches during Divine Liturgy. On this occasion, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, celebrated Divine Liturgy, deliver the sermon, and ordained deacons at St. Mary's Church in Glendale.

The newly ordained deacons are Hrant Guekguezian, Setrag Karadolian, Raffi Naljian, Raffi Kurkjian, Arthur Majarian, and Mihran Vartanian.

With the singing of the "Hrashapar" hymn, the Prelate entered the church in a procession to begin the celebration of the Divine Liturgy.

The ordination of the deacons took place prior to the sermon. With the stole-bearers kneeling on the altar, the Prelate beseeched Almighty God to bless them and cleanse them of their sins as they prepared to receive the rank of deacon. Facing westward, the stole-bearers renounced their worldly transgressions and accepted their new responsibilities as deacons.

In his sermon, the Prelate extolled the life and virtues of St. Stephen, urging the newly ordained deacons to remain unwavering in their faith and duties and to live and service in the example of St. Stephen.